ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

1236 թ. «ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»[1] Հյուսիսային Հայաստանն ու Արևելյան Վրաստանը գրավելուց և իրենց տիրապետությունն ամրապնդելուց հետո մոնղոլները ձեռնամուխ եղան Հայաստանի արևմտյան ու հարավային շրջանների գրավմանը: Դրանց մեծ մասը գտնվում էր Իկոնիայի սելջուկյան սուլթանության կազմում, քանզի 1232 թ. մինչև 1242 թ. ընկած ժամանակահատվածում էյուբյանների տիրույթների գերակշիռ մասն անցել էր սելջուկներին[2]:

Քանի որ Անդրկովկասում և Հյուսիսային Իրանում գործող մոնղոլական զորքերի հրամանատար Զարմագանը համբանալով ի վիճակի չէր գլխավորել 1242 թ. գարնանը մոնղոլների վտանգավոր հակառակորդ Իկոնիայի սելջուկյան սուլթանության դեմ նախատեսվող արշավանքը, մեծ խան Ուգեդեյի (1229–1241) հրամանով նրան փոխարինեց Բաչու նոյինը: Ուգեդեյի հրամանը տեղ հասավ նրա մահանալուց հետո՝ 1242 թ. սկզբին: Զորագլուխ կարգվելուց հետո Բաչու նոյինն անմիջապես ձեռնամուխ եղավ արշավանքի նախապատրաստմանը: Ըստ այս իրադարձությունների առավել հանգամանալի անդրադարձած Կիրակոս Գանձակեցու, Բաչուն «իսկոյն զոր դումարեաց յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ սուլտանին հոռոմոց»[3]: Բաչու նոյինի կողմից մոնղոլական բանակի կազմում ընդգրկված «յամենայն ազգաց» զորքերի թվում էին նաև հայ և վրաց իշխանների հեծելազորերը: Այս արշավանքի մասնակից հայ իշխաններից պատմիչը հանվանե հիշատակում է Ավազ ու Շահնշահ Զաքարյաններին, Աղբուղա Վահրամյանին և Գրիգոր Դովլյանին[4]: Ուստի Բ. Ուլուբաբյանը վրիպել է, պնդելով, որ ըստ Կիրակոս Գանձակեցու Հասան-Ջալալ իշխանը մասնակցել է այս արշավանքին[5]:

1242 թ. գարնանը սկսված մոնղոլական արշավանքի նշանակետը Իկոնիայի սելջուկյան սուլթանության կարևոր տնտեսական կենտրոն և ռազմավարական բացառիկ նշանակություն ունեցող Կարին քաղաքն էր իր ու շրջակա գավառներով: Մոնղոլական զորքի մոտենալուն պես Կարնո դա-

---

[1] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն). Վենետիկ, 1862, էջ 145:

[2] Ն. Շ ե ն դ ե լ ի ա. Իրն Բիբի ալա ադ-Դին Քեյ Քուրատի Վրասան արշավանքի մասին.– Մացնե (պատմության շարք) 1975, №1, էջ 105 (վրաց.):

[3] Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գ ա ն ձ ա կ ե ց ի). Երևան, 1961, էջ 279, հմմտ. Վ ա ր դ ա ն, էջ 147:

[4] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 280:

[5] Բ. Ա. Ու լ ու բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը X-XVI դարերում. Երևան, 1975, էջ 193:

վառի ամբողջ բնակչությունն ամրացավ քաղաքում՝ ապավինելով նրա պարիսպների անմատչելիությանը: Հասնելով Կարին, մոնղոլական զորքն այն պաշարեց: Ավելորդ զոհերից խուսափելու նպատակով Բաչու նոյինը պատգամավորների միջոցով կարինցիներին հնազանդության կոչեց: Սակայն նրանք ոչ միայն մերժեցին ու պատգամավորներին անարգանքով հետ դարձրին, այլև պարիսպների վրա բարձրանալով՝ նախատեցին մոնղոլներին: Դա տեսնելով, Բաչու նոյինը ձեռնամուխ եղավ Կարինի գրավմանը, որը տևեց երկու ամիս: Նրա հրամանով քաղաքի պարիսպները բաժանվեցին տարբեր հատվածների, որոնք սկսեցին փլցվել քարարկեց գործիքների՝ բաբանների միջոցով: Զնայած կարինցիների ու այնտեղ ապաստանածների հուսահատ դիմադրությանը, մոնղոլներն ի վերջո պարիսպները խորտակելով ներխուժեցին Կարին: Դրան հետևեցին անխնա կոտորածն ու գերեվարությունը, թալանը և ապա քաղաքի հիմնովին ավերումն ու հրդեհումը: Մոնղոլները նաև ավերեցին, իսկ նախքան այդ, թալանեցին Կարինի վանքերն ու եկեղեցիները և գերեվարեցին բազմաթիվ հոգևորականների: Մոնղոլների գերածները և թալանած հայերեն ձեռագիր մատյաններն ու սուրբ մասունքներն այնքան շատ էին, որ նրանք այդ ամենն ու գերությունները չնչին գներով վաճառում էին Կարինի գրավմանը ժամանակից հայ ու վրաց իշխաններին և զորքում գտնվող այլ քրիստոնյա զորականներին: Վերջիններս դրանք փրկեցին ոչնչացումից և նվիրեցին Հայաստանի վանքերին ու եկեղեցիներին՝: Կարինի գրավման ժամանակ մոնղոլների կողմից գերվածների թվում էին նաև Հարտսի սեծառուն Ուամեկն իր ազգական Ամերանոսի և հինգ որդիների հետ՝:

Օգտվելով դիմադրության լիակատար բացակայությունից, մոնղոլներն անպատիժ ասպատակեցին ու թալանեցին նաև շրջակա գավառները և մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով աջնանը վերադարձան Ադիաբ՝ Մուղանի իրենց մշտական ձմեռանոցը և Հայաստանի դաշտավայրերը՝ հանգստանալու ու ձմեռելու: Իկոնիայի սելջուկյան տիրակալ Դիաս ադ-Դին Քեյ Խոսրով II-ը (1237–1246), որն անպատրաստ լինելու հետևանքով գոնե չէր փորձել կանխել Կարինի ու շրջակա գավառների գրավումը, դեսպանների միջոցով մոնղոլներին մարտահրավեր նետեց, հայտնելով, որ մատղիր է հաջորդ տարի իր կանոնագրով ձմեռել Մուղանում: Ի պատասխան Բաչու նոյինը պատգամավորներին ասաց. «Մեռանեմ բարբառեցյալը, սակայն ում առաջած տայէ, նոցա լիցի յաղթութիւն»[9]: Նկատի ունենալով, որ Դիաս ադ-Դինը իսնամքով է պատրաստվել պատերազմին, Բաչու նոյինը նրան գլխովին ջախջախելու նպատակով հավաքեց «անթիվ բազմութեամբ»[10] զորք, որի մեջ ընդգրկեց նաև իրենց ենթարկված հայ ու

---

[6] Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի. Պատմութիւն Թաթարաց (այսուհետև՝ Ա կ ն ե ր ց ի), Երուսաղեմ, 1971, էջ 28:

[7] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 279-281, Ա կ ն ե ր ց ի, էջ 28, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 228-229, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, Երևան, 1951, էջ 41:

[8] Վ ա ր ա ն, էջ 147:

[9] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 281:

[10] Ա կ ն ե ր ց ի, էջ 29:

վրաց իշխանների հեծելազորները[11]: Կիրակոս Գանձակեցին այս արշավանքի մասնակից հայ իշխաններից հիշատակում է Ավագ ու Շահնշահ Զաքարյաններին, Վահրամ Գագեցուն ու իր որդի Աղբուղային, Հասան-Ջալալին և Գրիգոր Դոփյանին[12]:

Մոնղոլական զորքը 1243 թ. գարնանը Մուղանից մտավ Հայաստան և այնտեղի հարուստ արոտավայրերում հանգստանալուց ու ձիերին գիրացնելուց հետո անշտապ մտավ Իկոնիայի սելջուկյան սուլթանության տարածք և Կարինի վրայով շարժվեց դեպի՝ Հ. Մանանդյանի առաջարկած ընդունելի տեղադրության համաձայն, Երզնկայից 15-20 կմ արևելք ընկած Չմանկատուկ գյուղաքաղաքը (այժմյան Չիմին գյուղը)[13], որի շուրջ փռված դաշտավայրում ճամբար էր զարկել Ղիաս ադ-Դինի հսկայական բանակը[14]: Սելջուկյան հաղթանակին վստահ Ղիաս ադ-Դինը, որին օգնական զորք էր ուղարկել նաև Հալեպի տիրակալը[15], բերել էր իր կանանոցը, բազմաթիվ հարստություններ, ինչպես նաև վայրի գազաններ ու սողուններ, որոնք պետք է զվարճացնեին զորքին: Մարտից առաջ Բայջու նոյինը դասավորեց իր ուժերը, ընտրեց առաջապահներին, իսկ բանակի կազմում գտնվող ոչ մոնղոլական զորամասերի դավաճանությունը կանխելու նպատակով դրանց ցրեց տարբեր տեղերում[16]:

1243 թ. հուլիսի 3-ին[17] Չմանկատուկի մոտ կայացավ կատաղի ճակատամարտ, որը շարունակվեց մինչև ուշ երեկո, բայց կողմերից ոչ մեկին առավելություն չտվեց: Ինչպես կարելի է մակաբերել Կիրակոս Գանձակեցու մի վկայությունից «իբրև եկն բուն բանակն»[18], դրա պատճառն այն էր, որ Մոլար նոյինը մոնղոլական մարտավարական ավանդույթին հավատարիմ՝ մարտադաշտ էր նետել միայն հիմնականում այլազգիներից բաղկացած իր առաջապահ ուժերը, որոնց մեջ մարտունակությամբ առանձնանում էին հայ և վրաց իշխանների զորքերը: Չմանկատուկի ճակատամարտում հատկապես աչքի ընկավ Աղբուղա Վահրամյանը, որն իր հեծելազորով հայ և վրացական մյուս զորամասերի շարքում գործում էր մոնղոլական առաջապահի ձախ թևում, ընդդեմ Ղիաս ադ-Դինի բանակի աջ թևի: Համաձայն Գրիգոր Ակներցու, «իշխանն՝ տէրն Գագայ, որդին մեծին Վարհրամայ, թոռն Իւու Զաքարէի, Աղբուղայ անուն, քաջապէս մարտուցեալ ընդդեմ զաւրու սուլտանին, հանդերձ այլ ազատազունդ զաւրաւքն Հայոց եւ Վրաց, որ ընդ նմայ, եւ դարձուցեալ զաջ թեւ զաւրաց սուլտանին, բազում ամիրայից եւ մեծամեծաց զլուխ հատեալ՝ յոյժ տրտմեցուցին զսուլտանն»[19]:

---

[11] Նույն տեղում, էջ 28-29. Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 282, Վրաց ժամանակագրություն (1207-1318). Երևան, 1971, էջ 77:

[12] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 282:

[13] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Գ, Երևան, 1952, էջ 215:

[14] Գրիգոր Ակներցին (էջ 29) Ղիաս ադ-Դինի բանակի թիվը «ՃՌ (= 100000) ալք եւ Կ» (60) հազար է հաշվում, իսկ վրաց անանուն ժամանակագիրը՝ 400 հազար (Վրաց ժամանակագրություն, էջ 77).

[15] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին. Երևան, 1965, էջ 235

[16] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 283:

[17] Проблемы истории Турции. М., 1978, с. 12.

[18] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 29:

[19] Ա կ ն ե ր ց ի, էջ 29:

Մութն ընկնելուն պես մարտը դադարեց, և կռվող կողմերը քաշվեցին իրենց բնակատեղերը: Սակայն գիշերը Ղիաս ադ-Դինը տեսնելով, որ իր ամիրաներից շատերը հակված են անցնելու թշնամու կողմը, մագապուրծ փախավ, թշնամուն թողնելով իր բերած ամբողջ հարստությունը և վայրի գազաններին ու սողուններին: Մոնղոլական բանակը (այդ թվում հիմնական ուժերը) հաջորդ առավոտյան հեշտությամբ ջախջախեց ու մեծ կորուստներ պատճառեց Ղիաս ադ-Դինի բարոյալքված բանակին ու տիրացավ նրա ամբողջ ունեցվածքին[20]:

Իկոնիայի սելջուկյան սուլթանության ճակատագիրը վճռած Զմանկատուկի ճակատամարտից հետո մոնղոլները ոչ թե հետ դարձան, ինչպես նախորդ տարի Կարինի գրավումից հետո էին արել, այլ խորացան սուլթանության խորքերը՝ այն գրավելու, ավերելու և կողոպտելու նպատակով: Խուսանավով Իկոնիայի սելջուկյան սուլթանությունում, մոնղոլները միմյանց հետևից տիրացան մի շարք քաղաքների, որոնց գրավման հերթականությունն աղբյուրներում տարբեր կերպ է ներկայացված: Ըստ Կիրակոս Գանձակեցու և աներկբայորեն նրանցից օգտված Վարդան վարդապետի ու նրանց աղբյուր ունեցած Անանուն Սեբաստացու, մոնղոլները Զմանկատուկի ճակատամարտից հետո նախ գրավել են Կեսարիան, ապա Սեբաստիան, իսկ վերջում Երզնկան՝ իրենց հարակից գավառներով[21]: Ընդ որում, վերջին երկու հեղինակները բաց են թողել Կիրակոս Գանձակեցու կողմից Երզնկայից հետո հիշատակված Տյուրիկեն: Համաձայն Գրիգոր Ակներցու, մոնղոլները սկզբում գրավել են Երզնկան, ապա Կեսարիան, Իկոնիան և Սեբաստիան[22]: Ստեփաննոս եպիսկոպոսն առաջարկել է Երզնկա, Սեբաստիա, Կեսարիա հաջորդականությունը, իսկ Մխիթար Այրիվանեցին բավարարվել է միայն Կեսարիայի հիշատակմամբ, հավելելով Անտալիան[23]: Վրաց անանուն ժամանակագիրն իր հերթին հաղորդում է, որ Զմանկատուկի ճակատամարտից առաջ մոնղոլներն ասպատակել են «Սեբաստիայի ու Երզնկայի երկր[ներ]ը», իսկ դրանից հետո Ղիտս ադ-Դինին հետապնդելով հասել են մինչև Իկոնիա, որով նրանց արշավանքն ավարտվել է[24]: Այս իրադարձությունների ժամանակակից ու ականատես Սիմոն դը Սեն-Քունթենի վկայությամբ, մոնղոլները նախ գրավել են Երզնկան, ապա Սեբաստիան, իսկ հետո՝ Կեսարիան[25]:

Աղբյուրների հաղորդումների իրարամերժության հետևանքով մոնղոլների կողմից Իկոնիայի սելջուկյան սուլթանության քաղաքների գրավման հաջորդականության և, հետևաբար, նրանց ռազմարշավի երթուղու հարցում հետազոտողների կարծիքները տարամիտվել են: Դրա պատճառն այս կամ այն աղբյուրը հիմք ընդունելն է, առանց դրանց հաղորդումների հա-

---

[20] Նույն տեղում, էջ 30, Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 283, Վրաց ժամանակագրություն. 78, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 235:

[21] Գ ա ն ձ ա ե ե ց ի, էջ 283-284, Վ ա ր դ ա ն, էջ 147, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Երևան, 1956, էջ 140:

[22] Ա կ ն ե ր ց ի, էջ 30-31:

[23] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 41, Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական. Ս. Պետերբուրգ, 1867, էջ 82:

[24] Վրաց ժամանակագրություն, էջ 77-78:

[25] S i m o n d e S a i n t - Q u e n t i n. Histoire des Tatares. Paris, 1965, p. 75-76.

մագիր քննության և Սիմոն դը Սեն-Քուենթենի վկայության փաստական անտեսումը: Արդյունքում Մ. Չամչյանն ընդունել է քաղաքների գրավման Կեսարիա, Սեբաստիա, Երզնկա, Ս. Պողոսյանը՝ Կեսարիա, Երզնկա, Հ. Մանանդյանը և նրա հետևությամբ Լ. Բաբայանը՝ Երզնկա, Կեսարիա, Սեբաստիա, Տիվրիկ, Հ. Ստեփանյանը՝ Կեսարիա, Սեբաստիա, Երզնկա հաջորդականություն[26]: Ընդ որում, Հ. Ստեփանյանը վկայակոչելով Ստեփաննոս Օրբելյանին, նշել է, որ մոնղոլներն այս արշավանքի ժամանակ Նփրկերա (Մայաֆարկին) քաղաքի գրավման անհաջող փորձ են կատարել[27]: Սակայն Սյունյաց պատմիչի վկայությունը նման պնդման հիմք չի տալիս[28]: Իրականում, ինչպես ճիշտ ենթադրել է Հ. Մանանդյանը, Նփրկերայի անհաջող պաշարումը, որի ընթացքում, ըստ Ստեփաննոս Օրբելյանի, մահացել է Էլիկում Օրբելյանը, տեղի է ունեցել դեպի հարավային Հայաստան մոնղոլների կատարած արշավանքի ժամանակ[29], որը, սակայն, թվագրվում է ոչ թե 1245-ով, ինչպես կարծել է Հ. Մանանդյանը, այլ՝ 1244-ով:

Մոնղոլների ռազմարշավի երթուղու և դրանով իսկ նրանց կողմից Իկոնիայի սելջուկյան սուլթանության քաղաքների գրավման հաջորդականությունը ճշգրտելիս հարկ է ելնել այն իրողությունից, որ նրանք թշնամական տարածքում կարող էին խորանալ միայն իրենց շարժման ճանապարհին ընկած քաղաքներն ու ամրությունները գրավելուց և, դրանով իսկ, թիկունքն ապահովելու պարագայում: Տրամաբանական է, որ նրանք Իկոնիայի սելջուկյան տարածք պետք է ներխուժեին նախորդ տարի գրավված Կարինի վրայով և առաջ շարժվեին արևմուտք՝ Կարին–Երզնկա ուղղությամբ: Դա քաջ գիտակցում էր Ղիտս ադ-Դինը և Երզնկան մոնղոլների հարվածից զերծ պահելու մտայնությամբ էր նա ընտրել ճակատամարտի վայրը՝ Զմանկատուկ գյուղաքաղաքի շրջակա դաշտավայրը, «որ կա ընդ մէջ Կարնոյ քաղաքոյ եւ Երզնկային»[30]: Արդեն տեսանք, որ Հ. Մանանդյանը Զմանկատուկը տեղադրել է Երզնկայից 15-20 կմ արևելք, այն է՝ նրա մատույցներում: Հետևաբար, Զմանկատուկի ճակատամարտից հետո մոնղոլների առաջին քայլը կլիներ Երզնկայի և ոչ թե Զմանկատուկից հարյուրավոր կիլոմետրերով հեռու ընկած Սեբաստիայի կամ Կեսարիայի գրավումը: Առավել ևս, որ նրանք Սեբասիա կարող էին հասնել միայն Երզնկայի, իսկ Կեսարիա՝ Սեբաստիայի վրայով: Դա մոնղոլներին թիկունքի ապահովագրման առումով պարտադրում էր Զմանկատուկից իրենց շարժման ճանապարհին ընկած առաջին քաղաքի՝ Երզնկայի, գրավումը: Հետևաբար, վերը բերված աղբյուրներից լիովին արժանահավատ են Ստեփաննոս եպիսկոպոսի և Սիմոն դը Սեն-Քուենթենի վկայությունները, իսկ

---

[26] Մ. Չ ա մ չ յ ա ն. Հայոց պատմություն. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 217-218, Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1975, էջ 584, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Գ, էջ 215, Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1974, էջ 211, Հ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ. Երևան, 1990, էջ 69-71:

[27] Հ. Ս տ ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 71:

[28] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեա արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 404:

[29] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Գ, էջ 215:

[30] Ա կ ն ե ր ց ի, էջ 29:

մասնակի՝ Գրիգոր Ակներցուները՝ մոնղոլների կողմից առաջինը Երզնկան գրավելու հարցում:

Երբ մոնղոլները Երզնկան պաշարեցին, նրա բնակիչները կատաղի դիմադրեցին՝ թշնամուն պատճառելով զգալի կորուստներ: Տեսնելով, որ Երզնկայի գրավումը մեծ դժվարությունների ու կորուստների հետ է կապված, խորամանկ մոնղոլները դիմեցին խարեության մեկին: Նրանք «սկսան խաբէութեամբ արտաքս կոչել (Երզնկայի բնակիչներին – Ա. Շ.) սիրոյ աղագաւ, և նոցա հաւանեալ եկին»[31], քանի որ դրսից որևէ օգնության հույս չունեին: Այս կերպ Երզնկան գրավելով մոնղոլները սրատեցին նրա գրեթե ամբողջ բնակչությանը, կենդանի թողնելով միայն սակավաթիվ մանուկների ու աղջիկների, որոնց գերեցին՝ մատնելով ստրկության[32]: Երզնկայում վերակացուներ թողնելով[33], մոնղոլներն ուղղություն վերցրին դեպի արևմուտք՝ Սեբաստիա, որի բնակիչներին, անկասկած, հայտնի էր նրանց դիմադրած Երզնկացիների ճակատագիրը: Այդ իսկ պատճառով սեբաստացիները նվերներով ու ընծաներով մոնղոլներին ընդառաջ գնացին: Դրա շնորհիվ Սեբաստիան փրկվեց կոտորածից, թալանից, ավերումից ու գերեվարումից, քանի որ մոնղոլները լավարարվեցին միայն քաղաքից որոշ ավար հափշտակելով: Նրանք Սեբաստիայում ևս վերակացուներ ու հարկ նշանակելով հեռացան այնտեղից[34]: Շարժվելով հարավ և հասնելով Կեսարիա, մոնղոլներն այն շրջապատեցին և սկսեցին քաղաքի պաշարումը, քանի որ քաղաքացիները հրաժարվել էին կամավին ենթարկվել նրանց: Պատճառն այն էր, որ «բազում հեծեալ կայր բնակեալ ի նմա»[35]: Բացի այդ, կեսարացիներին օգնություն էր խոստացել Սիմոն դը Սեն-Քուենթինի խոսքերով ասած «Փոքր Հայքի թագավորը», այն է՝ Կիլիկյան Հայաստանի Հեթում I (1226-1270) արքան[36]: Այդ պատճառով Կեսարիան հանձնելու մասին մոնղոլների առաջարկին նրա կառավարիչները պատասխանում են, որ քաղաքը չեն կարող գրավվել ոչ պաշարողական մեքենաներով և ոչ էլ ուժով[37]: Երբ Հեթում I-ը 3 հազարանոց զորամասով Կեսարիային օգնության է գալիս, տեսնելով մոնղոլական բանակի բազմաքանակությունը, հաջորդ օրը հեռանում է[38]: Ի վերջո, խորամանկ մոնղոլներին հաջողվում է Կեսարիան ևս խաբեությամբ գրավել ու կողոպտել, քաղաքացիների մեծ մասին սրի քաշել և քաղաքն ամայի թողնելով հեռանալ[39]:

Ինչպես վերը նշվեց, այս արշավանքի ժամանակ մոնղոլները գրավեցին նաև Անտալիան, Իկոնիան ու Տյուրիկեն: Ըստ Կիրակոս Գանձակեցու,

---

[31] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 283-284:

[32] Նույն անդում, էջ 284, Վ ա ր դ ա ն, էջ 147, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ I, էջ 41, Ա կ ն ե ր ց ի, էջ 30: Ըստ Գրիգոր Ակներցու (էջ 31) Սեբաստիան մարտով է գրավվել:

[33] Ա կ ն ե ր ց ի, էջ 30:

[34] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 283, Ա կ ն ե ր ց ի, էջ 31, Վ ա ր դ ա ն, էջ 147, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 41:

[35] Ա կ ն ե ր ց ի, էջ 30:

[36] S i m o n de S a i n t - Q u e n t i n. Նշվ. աշխ., էջ 76:

[37] Նույն տեղում:

[38] Նույն տեղում:

[39] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 283, Վ ա ր դ ա ն, էջ 147, Ա կ ն ե ր ց ի, էջ 30-31, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 41:

նրանց նվաճած վերջին քաղաքը Տյուրիկեն էր[10], իսկ համաձայն վրաց անանուն ժամանակագրի՝ Իկոնիան, որը մոնղոլները գրավեցին քաղաքի դարպասների մոտ կայացած բազմօրյա կռվի մարից հետո: Տյուրիկեի բնակիչները գիտակցելով, որ մոնղոլներին դիմադրելն անիմաստ ու աղետաբեր է, կամովին անձնատուր եղան: Մոնղոլները մտնելով Տյուրիկե, այն շչոփելի կողոպուտի ենթարկեցին, բայց բնակչությանը ձեռք չտվեցին: Ինքնին հասկանալի է, որ այս ընթացքում գրավված քաղաքների թիվը միայն աղբյուրներում հիշատակվողներով կամ դրանց հարակից գավառներով չի սահմանափակվում:

Այս արշավանքի ընթացքում մոնղոլական բանակի հաջողությունները մեծապես պայմանավորված էին հարկադրաբար նրա կազմում ընդգրկված այլազգի, հատկապես հայ-վրացական հեծյալ զորամասերի հաջող գործողություններով: Այդ է վկայում Գրիգոր Ակներցին, գրելով հետևյալը. «Գլխաւորն զաւրուն Բաչու Նուինն յաջողեալ էր ի գործ պատերազմի, ուր և հանդիպէր ընդդէմ ազգացն իւրեանց, բազում յաղթութիւնս առնէր. բայց պատճառ յաղթութեանն էին Հայոց եւ Վրաց իշխանքն, որ լինէին երեսք գառաջինն, եւ ուժգին բախելով ի թշնամին յարձակէին, եւ ապա դէնի նոցա Տաթարն նեաւ եւ ազեցամբ»[11]: Այսպիսով, իրենց մարտավարությանը հավատարիմ, խորամանկ մոնղոլներն այլազգի զորքերին հարկադրում էին կռվել առաջապահում, իրենց վրա կրելով հակառակորդի հարվածի հիմնական ծանրությունը և տալով մեծ կորուստներ: Դրա փոխարեն թիկունքում գործող մոնղոլները ոչ միայն խուսափում էին շչոփելի կորուստներից, այլև բացառում այլազգի զորքերի նահանջի, փախուստի կամ դավաճանության հնարավորությունը: Բացի այդ, ինչպես նախորդ, այնպես էլ այս ու հետագա արշավանքների ժամանակ, մոնղոլները հայկական իշխանազորին հանձնել, մանավանդ քաղաքների պաշարման ժամանակ, ստիպում էին կռվել իրենց ազգակիցների կամ հավատակիցների դեմ: Հայ իշխաններն ու զորականները նաև այս արշավանքի ժամանակ փրկագնում կամ էլ ծածուկ գերությունից ազատում էին իրենց բազմաթիվ ազգակիցների, հատկապես հոգևորականների կամ էլ մոնղոլներից գնելով ոչնչացումից փրկում էին շատ հայերեն ձեռագիր մատյաններ, դրանք նվիրելով Հյուսիսային Հայաստանի հոգևոր հաստատություններին[12]: Այդ գործում Կիրակոս Գանձակեցին հատկապես արժևորել է Ավագ ու Շահնշահ Զաքարյանների, Վահրամ Գաղեցու և նրա որդի Ագբուգա Վահրամյանի, Հասան-Ջալալի ու Գրիգոր Դոփյանի վաստակը[13]:

1243 թ. ապտնոր մոնղոլական բանակը վերադարձավ Հայաստանում և Ալպանքում գտնվող իրենց ձմեռանոցները[14] անշնչացրեն իրագործելով Իկոնիայի սելջուկյան սուլթանության ջախջախումը և գրավելով նրա սահմանքի մեջ մտնող արևմտահայկական շրջանները: Հերթը հասավ Հայաստանի հարավային շրջաններին, որոնք, մեծ մասամբ, գտնվում էին այդ նույն սուլթանության կազմում: Հայաստանի հարավային շրջանների

---

[10] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 284. Վրաց ժամանակագրություն, էջ 78.
[11] Ա կ ն ե ր ց ի, էջ 29:
[12] Նույն տեղում, էջ 284. Հարեւն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 229:
[13] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 284:
[14] Նույն տեղում:

գրավմանը մոնղոլները ձեռնամուխ եղան 1244 թ. գարնանը[45] նպատակ ունենալով զարգացնել նախորդ երկու տարվա հաջողությունները և Ղիաս ադ-Դինին զրկել ուշքի գալու հնարավորությունից: Այս անգամ ևս մոնղոլական բանակի կազմում էր հայ-վրացական հեծյալ իշխանավորը: Մոնղոլական բանակը շարժվելով դեպի հարավ-արևմուտք, մտավ Բզնունիք և գրավեց Խլաթը[46], իսկ այնուհետև Բաղեշը[47] և դրանց շրջակա տարածքները: Մոնղոլները Խլաթը և շրջակա տարածքներն Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից խլելով հանձնեցին Իվանե աթաբեկ Զաքարյանի դուստր Թամթային, որը եղել էր Խլաթի Էյուբյան ամիրայության սիրակալ Մալիք Աշրաֆի կինը: Նա հետագայում գերվել էր խորեզմշահ Ջալալ ադ-Դինի, ապա մոնղոլների կողմից և տարիներ շարունակ գտնվում էր Ղարաղորումում՝ Մեծ խանի արքունիքում: Թամթան մոնղոլական գերությունից ազատվել էր Ռուսուդան թագուհու (1222–1245) կողմից 1244 թ. լիբև սլատգամավոր Սարայ՝ Բաթու խանի մոտ, ուղարկված հայ իշխան Համադոլայի միջնորդությամբ[48]: Այնուհետև շարժվելով դեպի հարավ-արևմուտք, մոնղոլներն ասպատակեցին Ամիդը, Ուռհան, Մծբինը և Հալեպը և այլ քաղաքներ[49]: Չնայած այս արշավանքի ընթացքում ևս մոնղոլները, բացառությամբ Նփրկերտի, լուրջ դիմադրության չհանդիպեցին, այդուհանդերձ ստիպված էին դադարեցնել հետագա առաջխաղացումը և վերադառնալ Արարատի փեշերին ու Գեղարքունիքում գտնվող իրենց ամառային զով բնակատեղերը[50]: Պատճառն այն էր, որ սաստիկ տապին անսովոր մոնղոլներն ու նրանց ձիերը մեծ կորուստներ ունեցան: Հաջորդ տարի՝ 1245 թ., մոնղոլական հրամանատարությունը հրամայեց վերաշինել Կարինը: Այնտեղ վերադարձան փախստականներն ու թարգմանները, ինչպես նաև քաղաքի եպիսկոպոս տեր Սարգիսը, որին բերեց Շահնշահ Զաքարյանը: Կարինը սկսեց վերստին հառնել ավերակներից ու վերաշինվել[51]:

Այսպիսով, 1242–1244 թթ. մոնղոլները տիրացան Հայաստանի արևմտյան և հարավային շրջաններին, հայ ժողովրդին պատճառելով անհամար չարիքներ:

---

[45] Այս արշավանքի տարեթվի ճշգրտումը տե՛ս Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Քաղաքական կացությունը Մերձավոր արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.).– «Պատմա-բանասիրական հանդես», 1989, №1, էջ 45, ծանոթ. 60:

[46] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 292:

[47] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 42:

[48] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 292:

[49] Նույն տեղում, էջ 292-293, հմմտ. Р а ш и д а д - Д и н. Сборник летописей. Т. II, М., 1960, с. 125.

[50] Վրաց ժամանակագրություն, էջ 79: Չնայած Կիրակոս Գանձակեցին նշում է (էջ 293), թե մոնղոլները վերադարձան ձմեռելու, ինքն իրեն հակասում է, քանի որ դրանից առաջ պնդում է, որ մոնղոլները ամառվա սաստիկ տապի պատճառով դադարեցրել էին արշավանքը: Հետևաբար, իրավացի է Վրաց անանուն ժամանակագիրը:

[51] Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 293:

ЗАВОЕВАНИЕ МОНГОЛАМИ ЗАПАДНЫХ И ЮЖНЫХ ОБЛАСТЕЙ АРМЕНИИ

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Р е з ю м е

После завоевания в 1236 г. Восточной Грузии и Северной Армении и укрепления там своей власти монголы приступили к завоеванию западных и южных областей Армении, входивших в состав сельджукского султаната Иконии. Предпринятые с этой целью походы весной 1242 г. успешно завершились летом 1244 г. Во время двух походов в 1242-1243 гг. монгольские войска, при принудительном участии армяно-грузинской конницы, разгромив сельджукский султанат Иконии, захватили западные области Армении. В 1244 г. они осуществили захват южных областей Армении, в результате чего Армения полностью оказалась под владычеством монголов. В этих походах особенно отличилась армяно-грузинская конница. Армянские князья и воины выкупили из плена многих армян, а также спасли множество армянских рукописей, которые могли быть уничтожены.